

ՄՈԳԱԿԱՆ
ՄՏՔԵՐԻ
ՏԱՐԻՆ

JOAN DIDION

**THE YEAR
OF MAGICAL
THINKING**

ԶՈԱՆ ԴԻԴԻՈՆ

ՄՈԳԱԿԱՆ
ՄՏՔԵՐԻ
ՏԱՐԻՆ

Թարգմանությունն անգլերենից՝
Անուշ Սեդրակյանի



ԵՐԵՎԱՆ
2024

ՀՏԴ 821.111(73)-94 Դիդիոն
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-4
Դ 473

Դ 473 Դիդիոն Ջոան
Մոգական մտքերի տարին / Ջ. Դիդիոն.- Եր.: Newmag, 2024.- 236 էջ:

Այս գրքում Ջոան Դիդիոնը պատմում է իր կյանքի ամենաբարդ տարվա մասին: Տարի, երբ հանկարծամահ է լինում նրա ամուսինը՝ գրող Ջոն Գրեգորի Դանը, որի հետ ապրել էր ավելի քան 40 տարի: Գիրքը հուզիչ հուշագրություն է հեղինակի վշտի մասին, կորուստը հաղթահարելու, պատահաձր հասկանալու և նախանշանների մասին, որոք նկատելու դեպքում գուցե կանխեր այն: Հեղինակն ընկղմվում է կորստի ապակողմնորոշիչ և սյուրռեալիստական փորձառության մեջ, մտորում ծեսերի և հիշողությունների մասին, որոնք ձևավորում են կյանքի և մահվան մեր ըմբռնումը: Հուշագրությունը ոչ միայն անձնական ողբերգության պատմություն է, այլ նաև սգո, տոկոնության և մարդկային ոգու ամենազորության ուսումնասիրություն:

ՀՏԴ 821.111(73)-94 Դիդիոն
ԳՄԴ 84(7ԱՄՆ)-4

Գիրքը լույս է տեսել
«Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան»
հովանավորությամբ:



ISBN 978-9939-967-48-6

© 2005 by Joan Didion Dunne 2001 Revocable Trust

Ջոան Դիդիոն, «Մոգական մտքերի տարին» © 2024, «ՆյուՄեգ» ՍՊԸ

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին: Իրավունքները ձեռք են բերվել Janklow & Nesbit Associates ընկերության հետ կնքած պայմանագրով:

Բովանդակություն

| | |
|----------------|-----|
| Գլուխ 1 | 9 |
| Գլուխ 2 | 15 |
| Գլուխ 3 | 40 |
| Գլուխ 4 | 49 |
| Գլուխ 5 | 71 |
| Գլուխ 6 | 85 |
| Գլուխ 7 | 92 |
| Գլուխ 8 | 98 |
| Գլուխ 9 | 105 |
| Գլուխ 10 | 116 |
| Գլուխ 11 | 131 |
| Գլուխ 12 | 151 |
| Գլուխ 13 | 167 |
| Գլուխ 14 | 175 |
| Գլուխ 15 | 182 |
| Գլուխ 16 | 192 |
| Գլուխ 17 | 195 |
| Գլուխ 18 | 206 |
| Գլուխ 19 | 215 |
| Գլուխ 20 | 219 |
| Գլուխ 21 | 225 |
| Գլուխ 22 | 227 |

Գիրքը նվիրվում է Ջոնին և Քինթանային

1

Կյանքն արագ է փոխվում:

Կյանքը փոխվում է մի ակնթարթում:

Նստում ես ճաշի, և քո սովորական կյանքը հանկարծ ավարտվում է:

Ինքնախղճահարության խնդիրը:

Սրանք իմ գրած առաջին բառերն էին պատահաճից հետո: Ըստ համակարգչային թվագրման՝ ֆայլը ստեղծվել է 2004 թվականի մայիսի 24-ին՝ ժամը 23:11-ին, բայց դա հավանաբար պայմանավորված է նրանով, որ ես բացել եմ ֆայլը և փակելուց առաջ մեքենայաբար սեղմել «պահպանել»: Մայիսին որևէ փոփոխություն չեմ կատարել: Ոչ մի փոփոխություն չեմ արել ֆայլում այն պահից սկսած, ինչ գրել եմ այդ բառերը 2004-ի հունվարին՝ հաջորդ օրը, կամ դա տեղի ունենալուց երկու-երեք օր անց:

Հետո երկար ժամանակ այլ բան չէի գրում:

Կյանքը փոխվում է մի ակնթարթում:

Սովորական մի պահի ընթացքում:

Ինչ-որ պահի, երբ փորձում էի մտաբերել, թե ինչը առավելագույն չափով ցնցեց ինձ կատարվածի մեջ, հասկացա, որ ամենից շատ ապշած եմ նրանից, որ հետո ավելացրի

«սովորական մի պահի ընթացքում» բառերը: Անմիջապես գլխի ընկա, որ կարիք չկար ավելացնել «սովորական» բառը, որովհետև նույնիսկ մեծ ցանկության դեպքում անհնար էր մոռանալ այն. այդ բառը անվերջ պտտվում էր ուղեղում: Հենց սովորական բնույթը այն ամենի, ինչ նախորդել էր դեպքին, թույլ չէր տալիս ինձ լիովին հավատալ, ընդունել, մարտել կատարվածը և մի կողմ դնել այն: Հիմա հասկանում եմ, որ դրանում անսովոր ոչինչ չկար: Երբ բախվում ենք հանկարծահաս ողբերգությանը, բոլորիս էլ ապշեցնում է այն միտքը, թե որքան սովորական, աննշան, առօրեական էին հանգամանքները, երբ տեղի ունեցավ անհնարինը, անհավատալին, անկարելին. անամպ կապույտ երկինք, որտեղից գահավիժեց օդանավը, ամենօրյա, միապաղաղ կրկնվող ուղևորություն, որն ավարտվեց ճամփեզրին այրվող մեքենայի մեջ, ճոճանակ ու սովորականի պես անհոգ ճոճվող երեխաներ, երբ բաղեղի թփերից դուրս պրծավ թունավոր օձը:

«Գործից տուն էր գալիս առողջ, երջանիկ, հաջողակ, ու հանկարծ վերջ. նա էլ չկա», – կարդացի մի անգամ հոգեբուժարանի բուժքրոջ գրառման մեջ: Նրա ամուսինը մահացել էր ավտովթարից: 1966-ին հարցազրույց վարելու առիթ ունեցա Հոնոլուլուի տասնյակ բնակիչների հետ, որոնք 1941 թվականի դեկտեմբերի 7-ին գտնվում էին այդ տեղանքում: Բոլորն առանց բացառության Պերլ Հարբորի վրա հարձակման մասին իրենց պատմությունը սկսում էին հետևյալ բառերով. «Շատ սովորական առավոտ էր: Սովորական արևոտ սեպտեմբերյան օր էր», – մինչև օրս էլ նշում են մարդիկ, երբ նրանց խնդրում են նկարագրել այն առավոտը Նյու Յորքում, երբ ամերիկյան N11 և N175 ավիաչվերթերի օդանավերը մխրձվեցին

Համաշխարհային առևտրի կենտրոնի աշտարակների մեջ: Նույնիսկ սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը հետաքննող հանձնաժողովի հաշվետվությունն է սկսվում չարագուշակ, ապշած պատմողական տոնով. «Երեքշաբթի, 11-ը սեպտեմբերի, 2001 թվական. առավոտյան մեղմ, հանգիստ եղանակ, երկնքում անպամածություն գրեթե չի նկատվում»:

«Իսկ հետո՝ վերջ. նա էլ չկա»: «Կյանքն ապրելով՝ մենք մնում ենք մահվան մեջ», – ասվում է եպիսկոպոսական եկեղեցու հոգեհանգստի կարգում: Ավելի ուշ ես հասկացա, որ պատմում էի կատարվածի մանրամասները յուրաքանչյուրին, ով այցելում էր ինձ առաջին շաբաթներին, բոլոր ընկերներին ու բարեկամներին, որոնք իրենց հետ ուտելիք ու խմիչք էին բերում և սեղան գցում ներկա հյուրերի համար: Հետո նրանք հավաքում էին սեղանը, ուտելիքը տեղավորում սառնարանում, միացնում սպասք լվացող մեքենան և իրենց ներկայությամբ լցնում էին մեր (ես դեռ չէի կարող մտովի ասել իմ) դատարկված տունը նույնիսկ այն ժամանակ, երբ ես գնում էի ննջասենյակ (մեր ննջասենյակը, որտեղ բազմոցին դեռ ընկած էր XL չափի գունաթափված խալաթը՝ գնված 1970-ականներին Բևեռլի Հիլզում՝ Ռիչարդ Քերոլի խանութից) ու իմ հետևից ծածկում դուռը: Առավել հստակ հիշում եմ այդ առաջին օրերի ու շաբաթների այն պահերը, երբ ինձ հանկարծ համակում էր ուժասպառությունը: Ու ամենևին չեմ հիշում, թե ինչպես եմ ինչ-որ մեկին մանրամասներ պատմել, բայց իրականում պատմել եմ, որովհետև բոլորը կարծես ամեն ինչ գիտեին: Ինչ-որ պահ մտածեցի, որ գուցե նրանք են միմյանց փոխանցել իմ պատմածը, բայց անմիջապես էլ հրաժարվեցի այդ մտքից. պատմությունը չափից դուրս ճշգրիտ էր, այն չէր

աղավաղվել ձեռքից ձեռք անցնելով: Ո՛չ, նրանք ամեն ինչ ինձնից էին իմացել:

Եվս մի հիմնավորում կար, որ ամեն ինչ ինձնից էր դուրս եկել. ոչ մեկի շարադրանքի մեջ չկային այն փաստերը, որ ինքս դեռ պատրաստ չէի ընդունել. օրինակ այն, որ հյուրասենյակի հատակին արյուն կար, որ այդպես էլ մնաց այնտեղ մինչև հաջորդ առավոտ, երբ եկավ Խոսեն ու մաքրեց այն:

Խոսեն մեր ընտանիքի անդամն էր: Այդ օրը՝ դեկտեմբերի 31-ին, պիտի մեկնեի Լաս Վեգաս, բայց այդպես էլ ոչ մի տեղ չգնաց: Հեկեկում էր, երբ սրբում էր հատակի արյունը: Երբ փորձում էի բացատրել նրան, թե ինչ է տեղի ունեցել, միանգամից չհասկացավ: Պարզ էր, որ չէի կարող վերարտադրել եղածը ամենայն ճշգրտությամբ. իմ պատմությունը ցաքուցրիվ էր, խուսափողական. դժվարանում էի հաղորդել բուն փաստը այդ դրության մեջ (նույն արգելքին բախվեցի, երբ ստիպված էի այդ լուրը հաղորդել Քինթանային), բայց հենց Խոսեն տեսավ արյան հետքերը, անմիջապես ամեն ինչ հասկացավ:

Առավոտյան՝ մինչև նրա գալը, հավաքել էի այս ու այն կողմ թափված ներարկիչներն ու էլեկտրասրտագրման էլեկտրոդները, բայց արյունը մաքրելն իմ ուժերից վեր էր:

Համառոտ

Հիմա, երբ սկսում եմ գրել այդ մասին, 2004-ի հոկտեմբերի 4-ն է՝ օրվա երկրորդ կեսը:

Ինը ամիս և հինգ շաբաթ առաջ՝ 2003 թվականի դեկտեմբերի 30-ին՝ երեկոյան մոտավորապես ժամը 9-ին, ամուսինս՝ Ջոն Գրեգորի Դանը, ըստ երևույթին (կամ այդպես էլ կար

իրականում), երբ հենց նոր էինք նստել ընթերելու Նյու Յորքի մեր բնակարանի հյուրասենյակում, հանկարծակի սրտի կաթված ստացավ, ինչն էլ նրա մահվան պատճառ դարձավ: Մեր միակ երեխան՝ Քինթանան, նախորդ 5 օրերին անգիտակից պառկած էր վերակենդանացման բաժանմունքում՝ Բեթ Իսրայել բժշկական կենտրոնի Սինգեր բաժնում: Այդ ժամանակ դա Իսթ Էնդ պողոտայում գտնվող հիվանդանոց էր (այն փակվեց 2004-ի օգոստոսին) և հայտնի էր «Հյուսիսային Բեթ Իսրայել» կամ «Բժիշկների հին հոսպիտալ» անուններով: Այն, ինչ սկսվեց որպես դեկտեմբերյան գրիպ, բավականին ծանր ընթացք ունեցավ, վերածվեց թոքաբորբի ու սեպտիկ շոկի, և Ծննդյան տոնի առավոտյան շտապօգնությունը նրան հիվանդանոց տարավ: Սա փորձ է՝ իմաստավորելու այդ դեպքերին հաջորդած շրջանը, օրերն ու ամիսները, որոնք հիմնավորապես կազմաքանդեցին իմ բոլոր կայուն պատկերացումները մահվան, հիվանդության, հավանականության և հնարավորության, լավ և վատ ճակատագրի, ամուսնության և զավակների, հիշողության և վշտի մասին, թե ինչպես են մարդիկ համակերպվում, կամ չեն համակերպվում այն իրողության հետ, որ կյանքը վերջավոր է, առողջ դատողության անհաստատ լինելու և ընդհանրապես կյանքի մասին: Ես իմ ամբողջ կյանքում գրող եմ եղել, և որպես այդպիսին՝ նույնիսկ մանուկ հասակում՝ շատ ավելի վաղ, քան իմ գրածները սկսեցին հրատարակել, զգում էի, որ իմաստն ինքնին պարփակված է բառերի, նախադասությունների, պարբերությունների ռիթմի մեջ, կատարման վարպետության մեջ, որը թույլ է տալիս ավելի ու ավելի անթափանց լաքի շերտի տակ թաքցնել ծածկել այն ամենը, ինչ մտածում եմ կամ ինչին հավատում եմ:

Իմ գրելառժը հենց այն է, ինչ ես եմ, կամ ինչ դարձել եմ, բայց այս անգամ բառերի և դրանց ռիթմերի փոխարեն կուզենայի ունենալ մոնտաժային սենյակ՝ Avid ծրագրով ու խմբագրման թվային համակարգով, որտեղ ստեղնաշարին դիպչելուն պես կարողանայի շրջել ժամանակագրական հաջորդականությունը, միաժամանակ ձեզ ցույց տալ հիշողությունների բոլոր կադրերը, որ հիմա հերթով գալիս են աչքիս առաջ, թույլ տալ, որ ընտրեք տեսարանները, իրարից աննշան տարբերվող արտահայտությունները, նույն տողերի տարբեր մեկնաբանությունները: Սա այն դեպքն է, երբ իմաստին հասնելու համար ինձ պետք է բառերից առավել ինչ-որ բան: Սա այն դեպքն է, երբ պետք է, որ այն ամենը, ինչի մասին մտածում եմ կամ ինչին հավատում եմ, ըմբռնելի դարձնեմ գոնե ինքս ինձ համար:

2

Երեքշաբթի, դեկտեմբերի 30, 2003 թ.

Գնացինք Քինթանային այցելելու Հյուսիսային Բեթ Իսրայելի 6-րդ հարկում գտնվող վերակենդանացման բաժանմունքում:

Վերադարձանք տուն:

Քննարկեցինք, թե որտեղ ընթերնք՝ տա՞նը, թե՞ դրսում:

Ասացի, որ բուխարին կվառեն, կարող ենք տանը ընթերել:

Վառեցի բուխարին, սկսեցի ուտելիք պատրաստել ու հարցրի Ջոնին՝ կուզենա՞ր ինչ-որ բան խմել:

Հետո հյուրասենյակում նրան տվեցի շոտլանդական վիսկիով լի բաժակը: Կարդում էր՝ սովորականի պես բուխարու կողքին նստած:

Կարդում էր Դեյվիդ ֆրոնկինի գիրքը, խմբագրական տարբերակը. «Եվրոպայի վերջին ամառը. ո՞վ սկսեց Մեծ պատերազմը 1914-ին»:

Պատրաստեցի ընթրիքն ու սեղան գցեցի հյուրասենյակում, որտեղ կարող էինք ընթերել բուխարու կրակի լույսի տակ: Շարունակ խոսում եմ կրակի մասին, որովհետև դա երկուսիս համար էլ կարևոր էր: Ես մեծացել եմ Կալիֆոռնիայում: Ես ու Ջոնը 24 տարի անցկացրինք այնտեղ, իսկ Կալիֆոռնիայում սովորաբար տունը տաքացնում են բուխարու